ԿԱՐԾԻՔ

Նանե Արտակի Զեյնալյանի «Անձի արժեհամակարգի բաղադրատարրերի առանձնահատկությունները հոգեբանական պատերազմի պայմաններում» թեմայով ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայ-ադրբեջանական հակամարտությունը վաղուց արդեն թելադրում է ոչ միայն Հայաստանի և Արցախի ռազմական ինստիտուտների (ՊՆ, ՊԲ) հիմնական գործողությունների և զարգացման վեկտորը, այլև դրանով է որոշակիացվում տնտեսական, սոցիալական և այլ կարևոր պետական ինստիտուտների ռազմավարական շատ մոտեցումները: Զինադադարից հետո (1994թ. մայիս), լայնածավալ ակտիվ ռազմական գործողություններին փոխարինեցին պասիվ լոկալ բռնկումները, դիվերսիաները (բացառությամբ 2016թ. ապրիլ և 2020թ. հուլիս), իսկ ակտիվ գործողությունների թատերաբեմ դարձավ տեղեկատվական տիրույթը, որտեղ պահանջվում էին համապատասխան կարողություններ և հմտություններ: Անհրաժեշտ է փաստել, որ զինադադարից հետո հակամարտությունը չավարտվեց, այլ փոխվեց պայքարելու գործիքակազմը, ինչը պահանջում էր նոր «խաղացողներ»:

Տեղեկատվական տիրույթում ընթացող պատերազմի բնորոշ կողմերից է հակամարտությանը ներգրավված սուբյեկտների արժեքների փոխակերպմանն ուղղված տեղեկութա-հոգեբանական ներգործությունը, ինչը միտված է մի շարք կարևոր խնդիրների լուծմանը: Այստեղ, իսկապես, հրատապ է դառնում համապատասխան հետազոտությունների կազմակերպումը, ինչը կնպաստի հակառակորդի տեղեկութա-հոգեբանական ներգործությունից հասարակության պաշտպանությանն ուղղված համարժեք գործնական առաջարկությունների մշակմանը:

Վերոնշյալից (և աշխատանքում բերված այլ մոտեցումներից) ելնելով, հիմնավորված և պահանջված ենք համարում ատենախոսության թեմայի ընտրությունը, ինչով պայմանավորված, աշխատանքը դառնում է արդիական և հրատապ:

Ատենախոսության ներածական մասում հաջորդաբար ներկայացվում են հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, հետազոտության վարկածը, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության խնդիրները (թվով 6), պաշտպանության ներկայացվող դրույթները (թվով 7), հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, հետազոտության փուլերը, հետազոտության ընտրանքը, հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը, գիտական նորույթը, աշխատանքի փորձաքննությունը, կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության սեղմագիրն արտահայտում է աշխատանքի հիմնական դրույթները և բովանդակությունը:

Աշխատանքն ուսումնասիրելիս նկատվեցին նաև թերություններ, որոնց կանդրադառնանք ներքևում՝ ցանկանալով լսել ատենախոս Նանե Զեյնալյանի մեկնաբանությունները դրանց վերաբերյալ:

1. **Հետազոտության վարկածը**՝ «Անձի արժեհամակարգի բաղադրատարրերի առանձնահատկությունները հոգեբանական պատերազմի պայմաններում ենթարկվում են փոփոխության՝ նրա կյանքի նպատակներով և էքզիստենցիալությամբ պայմանավորված» (6) կոնկրետացման կարիք ունի, քանի որ ատենախոսի համար ընդունելի է ՀՊ-ի վերաբերյալ այն մոտեցումը, որ «...ժամանակակից փուլում հոգեբանական պատերազմները կրում են մշտական բնույթ և պայմանավորված չեն իրական ռազմական գործողություններով» (44) և նույն տեղում շարունակում է, որ «Միաժամանակ, արձանագրենք, որ ՀՊ հիմնական միջոցը տեղեկույթն է, որի միջոցով անձի գիտակցության վրա կանոնավոր նպատակաուղղված ներգործություն է իրականացվում, ինչն էլ հուզական ազդեցություն է ունենում անձի վրա և կարող է հանգեցնել անձի արժեքային կողմնորոշումների փոխակերպմանը» (44): Հոգեբանական պատերազմի վերաբերյալ սույն մոտեցումը թույլ է տալիս ենթադրել, որ այն (ՀՊ) ՀՀ-ում և ԱՀ-ում չի սահմանափակվում միայն Ապրիլյան պատերազմի կամ ընդհանրապես Արցախյան հիմնախնդրի շրջանակներում տարվող հոգեբանական պատերազմով, այլև կարող է լինել ՀՀ-ում և ԱՀ-ում տարբեր պետությունների շահերը և մոտեցումները թելադրելու, իրականացնելու հետ կապված, ունենալ ներքաղաքական համատեքստ, ինչպես նաև տարվել կրոնական-հոգևոր դաշտում: Սակայն,

ատենախոսությունում հոգեբանական պատերազմի հետազոտությունների սպեկտորը շատ ավելի նեղ է (ինչը ողջունելի է), ուսումնասիրվել է «Հոգեբանական պատերազմ վարելու վերջին զանգվածային դեպքերից 2016թ. Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում ՀԼՄ-ներում ներկայացվող տեղեկույթի առանձնահատկությունները» (51): Հետևաբար, թյուրըմբռնումից խուսափելու համար, կարիք ենք տեսնում, որ վարկածում այն արտացոլվեր:

Կոնկրետացման պահանջը, նույն տրամաբանական սկզբունքից ելնելով, նաև վերաբերում է **հետազոտության առարկային**՝ «Հոգեբանական պատերազմի պայմաններում անձի արժեհամակարգի դրսևորման առանձնահատկություններն են» (6):

2. **Հետազոտության փուլերը** հատվածում (9, 10) հստակ նշված չէ, թե հետազոտություններն ինչ ժամանակահատվածում են կատարվել (միայն նշված է, որ չորրորդ փուլում, էքզիստենցիալության ցուցանիշի համեմատական վերլուծությունը կատարվել է պատերազմական գործողություններին անմիջապես հաջորդող և հրադադարի ռեժիմի պահպանման շրջանում (10): Հրադադարի պահպանման շրջանը բավականին մեծ է և այդտեղ առկա է անորոշություն:

Աշխատանքի հետազոտական մասում (86, 87) նշվում է, որ կյանքի իմաստավորվածության ախտորոշման մեթոդիկան կիրառվել է իրականացված հետազոտությունից 2 տարի անց (2017 և 2019թթ.) և կատարվել է մեթոդիկայի արդյունքների համեմատական վերլուծություն ՀՀ և ԱՀ հետազոտական խմբերում: Թերևս, ատենախոսը չորրորդ փուլի հատվածում, այս հետազոտությունը նկատի ուներ, ինչի պարագայում չի համընկնում պատերազմական գործողություններին անմիջապես հաջորդող ժամանակահատված ձևակերպումը (առաջին հետազոտությունն իրականացվել էր 2017թ., ամիսը և օրը նշված չէ):

Եզրակացություն 7-ում կրկին հանդիպում ենք այդ ձևակերպմանը՝ «Պատերազմական գործողություններից անմիջապես հետո... իրականացված հետազոտության արդյունքները (145), ինչի վերաբերյալ ևս կցանկանայինք լսել ատենախոսի մեկնաբանությունները:

3. Ներածությունում (10), հետազոտական մասում (52), **հետազոտության ընտրանքը** ներկայացնելիս, տեղեկատվությունն ամբողջական չի ներկայացվում,

մասնավորապես. «Հետազոտության ընտրանքում ներառվել են 18-25 տարեկան 200 երիտասարդներ: Ընտրանքը բաժանվել է երկու խմբի: Խմբերի ընտրության համար հիմք է ծառայել շփման գոտուց հեռավորությունը. այն է՝ Արցախի սահմանամերձ և ՀՀ ոչ սահմանամերձ շրջանները» (10):

ա) Հետզոտական ընտրանքում որպես առանձին խումբ է ներգրավվել Ապրիլյան քառօրյա պատերազմին կամավոր և ժամկետային զինվորական ծառայության ընթացքում մասնակից երիտասարդներ, սակայն չի նշվում, թե քանի հոգի են ընդգրկվել:

բ) Նշվում է, որ խմբերի ընտրության համար հիմք է ծառայել շփման գոտուց հեռավորությունը, սակայն չի նշվում, թե սահմանամերձ գոտու ընտրությունն ինչ հեռավորությամբ է պայմանավորված: Այս հարցի կարիքը հնարավոր է չլիներ, եթե նշված լինեին, թե որ շրջանների քաղաքներն ու գյուղերն են ընդգրկված եղել, ինչը, մեր կարծիքով, կարող էր էական նշանակություն ունենալ հետազոտության համար, մասնավորապես.

ԱՀ սահմանամերձ շրջանները, բնակչության հետ կապված, ունեն առանձնահատկություններ, օրինակ, Մարտակերտի շրջանի սահմանամերձ գյուղերում ապրում են տեղաբնակ արցախցիներ, որոնք ունեն երկար տարիներով ձևավորված ավանդույթներ և որոնց հատուկ է որոշ անձնային առանձնահատկություններ, իսկ, օրինակ, ԱՀ Շահումյանի շրջանի բնակչությունն ունի այլ առանձնահատկություններ, քանի որ սահմանամերձ որոշ գյուղերում տեղաբնակներ չեն, այլ եկել են Գետաշենից, Արցախի և ՀՀ տարբեր բնակավայրերից, որոնցից յուրաքանչյուրն իր հետ բերել է իր տեղանքին հատուկ ավանդույթները և օժտված է այդ տեղանքի բնակչությանը բնորոշ առանձնահատկություններով:

Հետազոտությունների վայրի վերաբերյալ կարողացանք տեղեկատվություն ստանալ հավելված 9-ից և հավելված 10-ից, որտեղ բերվում էր թեստավորման արդյունքում բացահայտված կոռելացիոն կապերը Երևան քաղաքի հետազոտական խմբում (հավելված 9) և թեստավորման արդյունքում բացահայտված կոռելացիոն կապերը Ստեփանակերտ քաղաքի հետազոտական խմբում (հավելված 10): Եթե առաջինը համապատասխանում է ՀՀ ոչ սահմանամերձ շրջան, գոտի ձևակերպմանը,

ապա երկրորդը չի մտնում ԱՀ սահմանամերձ շրջան, գոտի ձևակերպման շրջանակների մեջ:

4. **Գիտական նորույթը** հատվածում ատենախոսը նշում է, որ «Բացահայտվել է անձի արժեքների հիերարխիկ տարբերությունները՝ պայմանավորված շփման գոտում և շփման գոտուց դուրս բնակվելու հանգամանքով» (11): Աշխատանքում հետազոտություններն իրականացվել են ՀՀ ոչ սահմանամերձ շրջանների և ԱՀ սահմանամերձ շրջանների երիտասարդների հետ (10), ինչի համամեմատական վերլուծությունն էլ թույլ է տվել նման եզրահանգման գալ: Սակայն այստեղ հաշվի չի առնվել այն (աշխատանքում չգտանք ասվածը հերքող փաստեր), որ անձի արժեքների հիերարխիան կարող է պայմանավորված լինել ոչ թե (ոչ միայն) շփման գոտում բնակվելու հանգամանքով, այլև Արցախի հանրապետության մի շարք առանձնահատկություններով (ներքաղաքական պրոպագանդա, տիրող բարոյահոգեբանական մթնոլորտ, միջանձնային հարաբերությունների առանձնահատկություններ և այլն), ինչը պարզելու համար, կարծում ենք, անհրաժեշտ կլիներ հետազոտություններ անցկացնել Արցախի ոչ սահմանամերձ շրջաններում և մայրաքաղաքում ապրող երիտասարդների հետ ևս:

Եզրակացություն

1. Հիմնավորված ենք համարում ատենախոսության թեմայի արդիականությունը և անհրաժեշտությունը, աշխատանքում կիրառված տարատեսակ մեթոդներն ու համեմատական վերլուծությունները:

2. Աշխատանքում նշված թերությունները (չորս կետում բերված) համարում ենք նշանակալի և ակնկալում ենք ատենախոսի կողմից սպառիչ պատասխաններ և մեկնաբանություններ:

Այդքանով հանդերձ գտնում ենք, որ Նանե Արտակի Զեյնալյանի «Անձի արժեհամակարգի բաղադրատարրերի առանձնահատկությունները հոգեբանական պատերազմի պայմաններում» թեմայով ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական

ատենախոսությանը ներկայացվող ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 7 կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՊՄՀ, կիրառական հոգեբանության
ամբիոնի դասախոս, հ.գ.թ. Գ.Ս. Եսայան

Հաստատում եմ՝
ՀՊՄՀ գիտ. քարտուղար,
մանկ. գիտ. թեկնած. դոցենտ Մ.Մ. Իսպիրյան

23 նոյեմբերի 2020թ.